Այսպիսի թոյլ և ուժացրիւ վիճակում չատ դժւար պիտի լինէր դրութիւնը, եթէ մահմետական խռովութիւնները վերածւէին ընդհանուր ապստամբութեան։ Այդպէս էլ պատահեց։ Անգլիացիների հեռանալուց յետոյ, Օլթիից մինչև Օրդուբաթ, ամբողջ տարածութեան վրա, բռնկւեց մահմետական ապստամբութիւնը։

Շարժումը սկսւեց Բէոյիւք-Վեդի գիւղից, որը վաղուց կէս-ապստամբ վիճակի մէջ էր, և հարևան գիւղերի հետ ունէր մօտ 4000 կուռղներ։ Սերտ կապ պահելով Արաքսի միւս ափի՝ Արալըխի քրդութեան հետ՝ նա մշտական սպառնալիք էր Շարուր-Նախիջևանի հայկական գօրքերի և երկաթուղային հաղորդակցութեան համար։ Բէոյիւք-վեդիցիները բազմաթիւ յարձակումներ էին գործում, թալանում ու սպանում էին հայերին և, առհասարակ, անհանդիստ հակապետական տարր էին։ Յուլիս 1-ին, Դաւալուի մօտերը նրանք սպանեցին 9 հայ գինուորներ և 12 գիւղացիներ։ Այդ դէպքը առիթ դարձաւ, որ հայկական հրամանատարութիւնը, համաձայնութեամբ անգլիական ներկայացուցչի, վճռէ դրաւել Բէոյիւք-Վեդին։ Այդ նպատակով, դէպքի վայրը ուղարկւեց մի գօրամաս՝ հրամանատարութեամբ գնդ. Ապրեսեանի, որը իր մօտ կանչելով գիւղի կոմիսարին և օգնականին՝ պահանջեց՝ յանձնել յանցաւորներին, վերադարձնել սպանուածների դէնքերն ու գոյքերը և վարձատրել սպանուածների ընտանիքներին։ Կոմիսարն ու օգնականը համաձայնեցին կատարել պահանջը, և յուլ. 4-ին գնդ. Ապրեսեանը իր գօրամասով, Բէոյիւք-Վեդիի ներկայացուցիչների ուղեկցութեամբ, մօտեցաւ գիւղին և բանակ դրեց։ Եւ երբ Բէոյիւք-Վեդիի ներկայացուցիչները գնացին գիւղ, վերջնական պատասխան բերելու համար, այնտեղից, յանկարծ, հայերի վրա բացւեց հրացանային ու գնդացիրային սաստիկ կրակ։ Յանկարծակիի եկած հայերը՝ տւին ծանր զոհեր — սպանւեց 5 սպայ և 30 զինւոր, վիրաւորւեց 7 սպայ և 120 զինւոր — և անկարգ նահանջեցին։ Յուլ. 8-ին հայկական հրամանատարութիւնը փորձեց ուժով դրաւել Բէոյիւք-Վեդին, բայց յաջողութիւն չունեցաւ։ Եւ այնուհետև սկսեց ուժեր հաւաքել ու պատրաստւել վճռական գործողութիւնների։

«Բէոյիւք-Վեդիի դրութիւնը լուրջ է, հեռագրում է 14 յուլ. Թեքինսկին։ Հայաստանը կենտրոնացնում է իր բոլոր ուժերը։ Քահանաներն իրենց քարոզներում կոչ են անում յարձակւել Բէոյիւք-Վեդիի վրա՝ սրբազան արշաւանք համարելով այդ։ Մահմետականներին կարող է ազատել Ազրբէջանի զինուած միջամտութիւնը... Մահմետականների դիմումին՝ օգնութեան համար՝ յայտարարեցի, որ առ այժմ Ազրբէջանը չի կարող զօրքով օգնել, բայց մահմետականների բոլոր ծախքերն ու վնասները անմիջապէս կը վերադարձւեն Ազրբէջանի կողմից։ Սպասւում են մեծ դէպքեր ամբողջ Շարուր—Նախիջևան—Օրդուբաթում և Կարսի շրջանում։ Առանց մի օր կորցնելու — ուղարկեցէք խոշոր դումար զինուորական կազմակերպութիւնների համար»։

Եւ, յիրաւի, Բէոյիւք-Վեդիի ազդանշանի վրա գլուխ բարձրացրին և Շարուրի ու Նախիջևանի թուրքերը։ Յուլիսի կէսերին չատպով Շահթախթ հասաւ թիւրքական բանակի զնդապետ Խալիլ բէյը, թիւրք սպաների ու 2-3